

«Գենդերային կարծրատիպերը» հայաստանյան համատեքստում. «Կեղծ խնդիրների» իրական դեմքը

Աննա Գևորգյան

Հայաստանյան իրականության մեջ դժվար է խոսել գենդերային խնդիրների մասին ու չմեղադրվել արևմտյան «կեղծ արժեքներին» տրվելու, «չեղած տեղը խնդիր սարքելու» մեջ: Խնդիրը, սակայն, իհարկե չեղած տեղը չի սարքած, ու նրանք, ովքեր ժխտում են խնդրի առկայությունը, լավ չեն պատկերացնում խնդիրն ինքնին: Հայաստանում արված բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս խնդրի ոչ միայն առկայությունը, այլև դրա հսկայական բացասական ազդեցությունը ոչ միայն կանանց, այլև ողջ հասարակության վրա: Այդ խնդիրներն առկա են ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ ընտանեկան մակարդակներում: Այդ մասին են վկայում ընտանեկան բռնության բազմաթիվ դեպքերը Հայաստանում, այդ բռնություններին հասարակության ոչ ադեկվատ արձագանքը, գենդերոցիդ տերմինով բնութագրվող երևույթի լայն տարածումը մեր երկրում, ինչպես նաև հասարակական-քաղաքական կյանքում կանանց ներգրավվածության ցածր տոկոսն ու բազմաթիվ այլ ցուցանիշներ: Բայց այս ակներև անհավասարություններից զատ կա նաև թաքնված, աննկատ անհավասարության, դիսկրիմինացիայի և սեքսիզմի դրսևորում, որ արտահայտվում է մեր լեզվի միջոցով առօրյա կյանքում ու հատկապես մեդիայի ոլորտում: Իսկ լեզվի ու մեդիայի դերակատարման ու հասարակության վրա ազդեցության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, արվել են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ վերը նշված գործիքները ոչ միայն արտացոլում են հասարակական այս կամ այն երևույթները, այլև վերարտադրում և խորացնում դրանք: Տվյալ դեպքում մեդիան ու լեզուն ոչ միայն արտացոլում են հասարակության մեջ առկա գենդերային խտրականությունները, այլև վերարտադրում են դրանք, դարձնում համատարած, սովորական, ընդունելի երևույթ: Ասածս հիմնավորելու համար մի հորինված հարցազրույցի օրինակ բերեմ.

Հեռուստահաղորդումներից մեկի հյուրը պատգամավոր Նշան Գևորգյանն ¹էր: Հաղորդավարը պատգամավորի հետ հարցազրույցը սկսեց հետևյալ հարցով.

-Ինչպե՞ս էք կարողանում լինել պատգամավոր և մնալ տղամարդ:

Պատգամավորը հարցից չզարմացավ ամենևին. Ձէ որ այդ հարցով են սկսվում գրեթե բոլոր հարցազրույցները: Նա պատասխանեց.

– Գիտեք, կարող եք չհավատալ, բայց տուն գնալուց հետո, ես սովորական տղամարդ եմ դառնում, վերանորոգում եմ անսարք տեխնիկան, գնումներ եմ անում տան համար ու մասնակցում երեխաների դաստիարակությանը:

-Իսկ ինչպե՞ս էք հասցնում համատեղել աշխատանքն ու ընտանիքում Ձեր ունեցած պարտականությունները:

¹ Անունը նույնպես հորինված է:

-Դե նախ պիտի շնորհակալ լինեմ կնոջու, որ աջակցում ու խրախուսում է ինձ ու թույլ տալիս զբաղվել իմ սիրած աշխատանքով: Եվ իհարկե, այս ամենը իրականություն չէր լինի, եթե չլիներ բարեկամների, հարազատների, հարևանների աջակցությունը:

-Ի՞նչ եք անում Ձեր առնականությունը, գրավչությունը պահպանելու համար:

-Իհարկե շատ դժվար է, աշխատանքային բազմաթիվ պարտականությունների հորձանուտում չկորցնել սողամարդկայնությունը, առնականությունը, բայց ես փորձում եմ հասցնել պահպանել այդ կարևոր հատկանիշներն ու աշխատանքային թոհուրոհի մեջ չմտնանալ իմ ամենակարևոր առաքելությունն այս կյանքում, որ հայր լինելն է, հոգատար ու սիրող հայր լինելը, լավ ամուսին լինելն ու նվիրված զավակ լինելը: Ես նախնառաջ հայր եմ, ամուսին ու զավակ, հետո նոր քաղաքական գործիչ....

Զարմացած եք: Իսկ ինչու՞ չեք զարմանում, երբ նույն այս անհեթեթ հարցերը կանանց են տալիս: Փորձեք հիշել, թե քանի անգամ եք լսել, երբ կին քաղաքական կամ հասարակական գործիչներին, ամենատարբեր մասնագիտությունների տեր կանանց հարցրել են, թե ինչպես են կարողանում պահպանել իրենց կանացիությունն ու կին մնալ՝ աշխատելու պարագայում: Կարող եմ պատասխանել ձեր փոխարեն: Որովհետև դա այնքան սովորական է դարձել, որ չենք էլ նկատում, որ անհեթեթություն է: Ավելին, հաճախ կին քաղաքական ու հասարակական գործիչներն իրենք իրենց մասին խոսելիս աղավաղում են կին հասկացությունը: Այդ հասկացությունն անհամատեղելի ներկայացնում բազմաթիվ մասնագիտությունների հետ, և իրենց ներկայությունն այս կամ այն ոլորտում համարում բարեբախտություն, ճակատագրի նվեր, հարազատների մեծահոգության դրսևորում: Հետաքրքիր զուգադիպությամբ այս տողերը գրելիս հանդիպեցի մի ներկայացման գովազդի, որ վերնագրված էր «Կինը՝ որպես մասնագիտություն»: Ներկայացումը, ցավոք, դեռ չեմ տեսել, բայց նրա վերնագիրը սերտ աղերսներ ունի կնոջ ժամանակակից ընկալման հետ մեր հասարակության մեջ: Իսկապես, կին լինելն ասես մի առանձին մասնագիտություն է ընկալվում: Իսկ իրական մասնագիտությունը կարծես համարվում է երկրորդ մասնագիտություն, որին տիրապետելն ու որում մասնագիտանալը ավելի բարդ գործ է, իհարկե: Եվ այս թյուր մոտեցումները, ցավալիորեն վերարտադրում են նաև իրենք՝ կանայք:

Հեռուստահաղորդումներից մեկի ժամանակ Խորհրդարանի փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանը մի օր հայտարարեց. «Պատգամավորական մանդատը կնոջ համար ամուսնության նման է. Երկու անգամ ավելանում են պարտականություններդ, և երկու անգամ նվազում իրավունքներդ»: Պատգամավոր Նաիրա Կարապետյանն էլ հավաստում է, որ թեև ինքը պատգամավոր է, բայց տանը աման է լվանում:

Այս դատողությունները ցույց են տալիս, որ պատգամավորական աշխատանքը կանանց համար չի նախատեսված: Եվ որ պատգամավոր դառնալով՝ կինը կարող է կորցնել իր կանացիությունը, որի աստիճուսներ են համարվում աման լվանալը, առհասարակ տանը գործ անելն ու քնքուշ ու հեզ լինելը:

Այսպիսով, լինել կին ու լինել քաղաքականության մեջ, դեռ չի նշանակում լինել պրո-կին քաղաքականության ջատագով: Կանանց մեծ մասին, ցավոք, այդ մանդատները տրվել են, այլ ոչ թե նվաճվել աշխատանքի, հավասար պայքարի արդյունքում: Եվ նրանց

մեծամասնությունը «ծառայում» է իրենց նշանակողներին, այլ ոչ թե իրենց, որպես կանանց շահերին:

Կնոջ դերի, նրա կատարած գործառույթների թերագնահատման, բացասական ընկալման տեսանկյունից գրեթե նույն իրավիճակն է նաև հասարակական սեկտորում, որի դիսկուրսում լավ, հանրօգուտ, բարի, քաջ տերմինները հաճախ ասոցացվում են տղամարդու, առնականության հետ, ի տարբերություն կանացիի, թույլի, անկարողի, վախկոտի:

Ազատամարտիկ կանանցից մեկը, Ազատության հրապարակում ազատամարտիկների բողոքի ակցիայի ժամանակ, քննադատելով երկրի նախագահին, նրան անվանեց կնոջ նման վախկոտ ու առաջարկեց նրան կաթսա նվիրել: Այս դեպքը վեր է հանում մեր հասարակության մեջ առկա գենդերային մի շարք կարծրատիպեր:

- Նախ, քաջությունը, խիզախությունը տղամարդկության հոմանիշներ են և որևէ կապ չունեն կնոջ ու կանացիության հետ: Էս կարծրատիպը, զարմանալիորեն, շրջանառվում է նաև քաջ, խիզախ կանանց միջոցով, ինչպես ցույց է տալիս վերոնշյալ օրինակը: Այն, որ կինը ազատամարտիկ է եղել, հետևաբար խիզախություն է ունեցել գնալ ռազմաճակատ ու նաև այսօր քաջություն ունի հրապարակից քննադատել երկրի նախագահին, չի փոխում իր իսկ տեսակետը կնոջ՝ թույլ ու վախկոտ լինելու մասին: Ավելին, նա կին հասկացությունը համարում է վախկոտության հոմանիշ, հետևաբար նաև բացասական նշան հաղորդում նրան, դարձնում վիրավորանք ու դրանով բնորոշում իր կողմից քննադատվող նախագահին:
- Իր մյուս դիտարկմամբ, նա ընդգծում է կանացիության իր պատկերացումը՝ իր կողմից կին անվանված տղամարդուն կաթսա նվիրելու ցանկություն արտահայտելով: Մրանով նա գծում է կնոջ «տարածքի» սահմանները՝ դրանք նույնացնելով խոհանոցի սահմանների հետ այն պարագայում, երբ ինքը, կին լինելով, այդ մտքերն արտահայտում է հրապարակից:

Այս մոտեցումը կարող է բացատրվել երկու տեսանկյունից:

- Առաջին: Նա իրեն թույլ ու վախկոտ չի համարում, բայցև գիտակցում է, որ ինքը բացառություն է որպես կին:
- Երկրորդ: Նա իրեն «տղամարդ-կին» է համարում՝ օժտված տղամարդկային, ասել է թե դրական, գովելի, ընդունելի արժեքներով:

Երկու դեպքում էլ ակնհայտ է բացասական վերաբերմունքը կանանց, կանանց կատարած աշխատանքի վերաբերյալ, ինչպես նաև աղավաղված, կարծրատիպային ընկալումները կանացիության մասին:

Այս համատեքստում կարևոր է հաշվի առնել, որ լեզվի կարևորագույն գործառույթներից մեկը հասարակության անդամներին իրենց տեղն ու դերը ցույց տալն է: Եվ բացի կանանց դերն ու տեղը որոշող տերմիններից ու բառերից, մենք ունենք նաև բառեր ու հասկացություններ, որոնք կանանց վերագրվելով՝ բացառում են տղամարդկանց մուտքն այդ հասկացությունների տարածք:

Որպես օրինակ, ֆեյսբուքում ձևավորվել է Հայ ծնողների ակումբ կոչվող մի խումբ, որտեղ վերնագիրը հուշում է, որ պիտի ընդգրկված լինեն ծնողներ, ասել է թե՛ հայրեր ու մայրեր

ու քննարկեն երեխաների հետ կապված հարցեր: Խմբում հրապարակվող գրառումները, սակայն, սկսում էին «Միրելի մայրիկներ» կոչականով: Դրանով իսկ ծնողներին վերագրվող ֆունկցիաներն ու ծնող հասկացությունն առհասարակ նեղացվում էր մինչև միայն մայր մակարդակի: Հետաքրքրորեն, այս իրավիճակից դժգոհեց մի հայրիկ-ծնող՝ խնդրելով կամ փոխել խմբի անվանումը կամ փոխել հրապարակումների կոչականներն ու դրանց հասցեատերերին: Արդյունքում, մայրիկ ծնողներից մեկը կես լուրջ-կես կատակ հրապարակմամբ հայրիկներին իրենց տեղը դրեց՝ ցույց տալով, որ նրանք փորձում են մտնել մի տարածք, որ այնքան էլ իրենց համար չի նախատեսված: Նրանցից մեկը գրել էր այդ խմբում. «Միրելի *ծնողներ*, ձեզնից ո՞վ ունի արգանդի իջեցում»:

Լեզվական դիսկրիմինացիոն դրսևորումների կարելի է հանդիպել նաև առօրյա խոսակցությունների, քննարկումների ժամանակ: Ծանոթներիցս մեկը բողոքում էր ճանապարհին իրեն հանդիպած մի վարորդից, որ սխալ տեղում կայանելով, քիչ էր մնացել, որ վնասեր մյուսների մեքենաները: Վարորդին նկարագրելիս նա ընդամենը մի բառ ասաց՝ կին էր: Բաց թողեց էնպիսի կարևոր բնութագրիչներ, ինչպիսին են անփորձ էր, վարել չգիտեր, հավանաբար մեքենան էլ իրենը չէր, այլ ասաց ընդամենը, որ նա կին էր: Մրանով ցույց տալով, որ կին հասկացությունն իր համար վերը նշված բնութագրիչների հոմանիշ է: Երբ փորձեցի բացատրել, որ դա սեքսիստ վերաբերմունք է կանանց նկատմամբ և որ էդ վերաբերմունքն ու առհասարակ, կանանց և տղամարդկանց միջև անհավասարությունը գերակշռում է մեր հասարակության մեջ, նա սաստեց ինձ. «Լավ էլի, որտեղ նայում ես կանայք են «ռուլիտ անում», իսկ դու անհավասարությունից ես խոսում»: Մի ուրիշ կարծրատիպ էլ ի հայտ եկավ: Եթե տղամարդիկ են, ղեկավարում են, եթե կանայք են, «ռուլիտ են անում»: Վերջին արտահայտությունն, իհարկե, բացասական նրբերանգ ունի, ավելի շատ ցինիկ վերաբերմունք է արտահայտում կնոջ կատարած աշխատանքի, տվյալ դեպքում, ղեկավարման, կառավարման վերաբերյալ:

Լեզվամտածողության ու հասարակական գիտակցության մեջ փոփոխություններ կատարելու ճանապարհն, իհարկե, անհատական մակարդակում փոփոխություններ կատարելն է: Կանանց ու տղամարդկանց շրջանում գենդերային էգալիտար լեզվամտածողության ու խոսքի քարոզչությունը կարող է իր ազդեցությունն ունենալ նաև նրանց վարքի վրա: Այս համատեքստում, կարևոր էմ համարում այդ երևույթների վերհանումը, քննարկումն ու վերլուծումը: